



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 742-Ա

ԿԱՐԻՆԱ ԿԱՐՈՅԻ ԲԱԲԱՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 15 նիստի արձանագրությունը և քաղաքացի Կարո Սուրենի Գևորգյանի 2021 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 3926 դիմումը, որոշում եմ՝

1. Կարո Սուրենի Գևորգյանին /ծնվ: 18.04.1965թ./ նշանակել խնամակալ Կարինա Կարոյի Բաբայանի (ծնվ. 18/09/2014) նկատմամբ հինգ ամիս ժամանակով:
2. Կարո Սուրենի Գևորգյանին վերապահել ի շահ իր խնամարկյալի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:
3. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ՀՀ վարչական դատարան:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է սույն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝

2021թ. նոյեմբերի 19
ք. Արմավիր



Խ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԻՎ 15 ՆԻՍՏԻ

Ք. ԱՐՄԱՎԻՐ

15.11.2021 թ.

Ժամը՝ 10³⁰

Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի
2021թ. նոյեմբերի 15-ին կայացած թիվ 15 նիստին մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Պողոսյան

Տեղակալ՝ Ա. Գրիգորյան

Անդամ՝ Հ. Ասատրյան

Լ. Խամիսյան

Քարտուղար՝ Ն. Խաչատրյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Արմավիրի համայնքապետարան մուտքագրված 2021 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 3926
դիմումը Արմավիր քաղաքի Չարենցի 4-րդ նրբ. 15 տան բնակիչ Կարո Գևորգյանի՝ իր
անչափահաս դստեր՝ Կարինա Բաբայանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին:

Ձեկ. Ռ. Պողոսյան

1.ԼՍԵՑԻՆ - Ռ. Պողոսյանը ներկայացրեց Չարենցի փողոցի 4-րդ նրբանցքի 15 տան բնակիչ
Կարո Սուրենի Գևորգյանի՝ Արմավիրի համայնքապետարան մուտքագրված 16.11.2021
թվականի թիվ 3926 դիմումը՝ անչափահաս Կարինա Կարո Բաբայանի նկատմամբ
խնամակալ նշանակելու մասին:

Համաձայն դիմումի՝ Կարինա Բաբայանի մայրը՝ Շուշիկ Բաբայանը, լքել է երեխային և մինչ
օրս նրա գտնվելու վայրը անհայտ է: Երեխայի խնամքով և դաստիարակությամբ զբաղվել է
Կարո Բաբայանը, ով վերջինիս պնդմամբ հանդիսանում է երեխայի կենսաբանական հայրը:
Կարո Բաբայանը մինչ Արմավիր համայնք բնակություն հաստատելը բնակվել է Հայկական
համայնքում և համայնքի ղեկավարի կողմից տրված 2019 թվականի ապրիլի 1-ի որոշման
համաձայն՝ Կարո Բաբայանը նշանակվել է խնամակալ Կարինա Բաբայանի նկատմամբ.
Խնամակալությունը դադարեցվել է Հայկական համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի

սեպտեմբերի 27-ին: Նաև 2020 թվականի ապրիլի 21-ին Արմավիրի համայնքապետարան մուտքագրված թիվ 1326 գրության մեջ նշվել է այն հանգամանքը, որ Կարո Գևորգյանը հանդիսանում է Կարինա Բաբայանի կենսաբանական հայրը: Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2020 թվականի հունվարի 29-ին կատարվել է ուսումնասիրություն, որը հաստատել է այն հանգամանքը, որ երեխայի խնամքով և դաստիարակությամբ զբաղվել է Կարո Գևորգյանը: 2020 թվականի մայիսի 19-ին Արմավիր համայնքի ղեկավարի 298-Ա որոշմամբ Կարո Գևորգյանը նշանակվել է Կարինա Բաբայանի նկատմամբ խնամակալ վեց ամիս ժամանակով: Կարո Գևորգյանի կողմից Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացվել հայրության ճանաչման վերաբերյալ: Քանի որ վերջինս գտնվում է տնտեսական ծանր պայմաններում, փարոս համակարգում ընդգրկվելու համար, մինչև հայրության ճանաչումը Կարինա Բաբայանի նկատմամբ անհրաժեշտ է Կարո Գևորգյանին նշանակել խնամակալ հինգ ամիս ժամանակով: Ուստի դիմումատուն խնդրում է իրեն նշանակել խնամակալ Կարինա Բաբայանի նկատմամբ:

Դիմումին կից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Կարո Գևորգյանի անձնագրի պատճեն
3. Կարինա Բաբայանի ծննդյան վկայականի պատճեն
4. Կարո Գևորգյանի առողջության մասին տեղեկանք
5. Կարինա Բաբայանի առողջության մասին տեղեկանք
6. Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոցից տեղեկանք
7. Արմավիր համայնքի ղեկավարի որոշում
8. Հաշմանդամության կարգի մասին տեղեկանք

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Սույն արձանագրությունը ներկայացնել Արմավիր համայնքի ղեկավարին՝ Կարո Սուրենի Գևորգյանին Կարինա Կարոյի Բաբայանի /ծնվ. 14.08.2014թ./ նկատմամբ հինգ ամիս ժամանակով խնամակալ նշանակելու մասին:

2. Միջնորդել համայնքի ղեկավարին հաստատելու հանձնաժողովի որոշումը:


ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի նախագահ՝

 Ռ. Պողոսյան

Քարտուղար՝

 Ն. Խաչատրյան